

ԷՐԱՋՄՈՒՄ+
ԿՐԵԴԻՏԱՅԻՆ
ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ



Erasmus+

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ո՞վ կարող է մասնակցել էրազմուս+ շարժունության ծրագրերին

էրազմուս+ շարժունության ծրագրերին կարող են մասնակցել ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի և ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների այն ուսանողներն ու դասախոսները, որոնք կրավարարեն շարժունության ծրագրերի բոլոր պահանջները:

Որտեղի՞ց կարող ենք տեղեկություն ստանալ ծրագրերի մասին

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժինը գործող ծրագրերի պահանջների, ժամկետների և ընթացակարգերի վերաբերյալ հայտարարություն է տարածում ԳԿՄԿ-ի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում.

<http://www.isec.am/structure/department/international-relations/projects.html/erasmus-plus>

<https://www.facebook.com/www.isec.am/>

Ո՞ր ուղղություններով են իրականացվում կրեդիտային շարժունության ծրագրերը

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն կրեդիտային շարժունության ծրագրեր է իրականացնում Եվրոպայի տարբեր երկրների և համալսարանների հետ: Շարժունության ծրագրերի ուղղվածությունը կախված է ընտրված մասնագիտությունից և յուրաքանչյուր ծրագրի առանձնահատկություններից, որոնց համապատասխան էլ ընտրվում է ծրագիրն իրականացնող համալսարանը: Ծրագրերի ուղղվածության և համալսարանների մասին տեղեկություններ կարող եք ստանալ Կենտրոնի կայքէջում հրապարակված հայտարարություններից:

<http://www.isec.am/articles/events.html>

Որքա՞ն է Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի տևողությունը


Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի տևողությունը ուսանողների համար 3-12 ամիս է, իսկ դասախոսների և վարչական աշխատակազմի համար՝ 7 օրից մինչև 2 ամիս: Յուրաքանչյուր ծրագիր ունի իրականացման իր հստակ ժամանակահատվածը, որի մանրամասները ներկայացվում են ծրագրին վերաբերող հայտարարության մեջ:

Ի՞նչ կազմակերպություն է ֆինանսավորվում կրեդիտային շարժունության ծրագրերը

Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրերը ֆինանսավորում է Եվրահանձնաժողովը՝ ներառելով ավիատոմսի, կեցության, օրապահիկի ծախսերը:

Ավիատոմսի արժեքին կարող էք ծանոթանալ հետևյալ հղումով՝ նշելով մեկնման և ժամանման երկրները.

http://ec.europa.eu/education/tools/distance_en.htm



Travel distances (km)	Amount € / participant
100 - 499	180
500 - 1999	275
2000 - 2999	360
3000 - 3999	530
4000 - 7999	820
≥8000	1100

Վերցված է erasmusplus.am վերկայքից:

Կեցության համար ամսական տրվում է 750–850 եվրո՝ կախված ընդունող երկրի համար նախատեսված դրույքաչափերից: Այս գումարից վճարվում են կացության թույլտվությունը (վիզա), ապահովագրությունը և ծրագրի իրականացման պահանջներից բխող այլ ծախսեր:

Վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի կացության համար տրվող գումարի չափը՝ ըստ ընդունող երկրների



Staff Unit Costs	
Receiving Country	Per Diem
DK, IE, NL, SE, UK	€160
BE, BG, CZ, EL, FR, IT, CY, LU, HU, AT, PL, RO, FI, IS, LI, NO, TR	€140
DE, ES, LV, MT, PO, SK, FYROM	€120
EE, HR, LT, SI	€100

Ուսանողների կացության համար տրվող գումարի չափը՝ ըստ ընդունող երկրների



Student Unit Costs													
<ul style="list-style-type: none"> Incoming (to Programme Countries) <ul style="list-style-type: none"> €850, €800, €750 Outgoing (to Partner Countries) <ul style="list-style-type: none"> €650 	<table border="1"> <thead> <tr> <th>Group</th> <th>Living Costs</th> <th>Countries</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Group 1</td> <td>higher living costs</td> <td>DK, IE, FR, IT, AT, FI, SE, UK, LI, NO</td> </tr> <tr> <td>Group 2</td> <td>medium living costs</td> <td>BE, CZ, DE, EL, ES, HR, CY, LU, NL, PO, SI, IS, TR</td> </tr> <tr> <td>Group 3</td> <td>lower living costs</td> <td>BG, EE, LV, LT, HU, MT, PL, RO, SK, FYROM</td> </tr> </tbody> </table>	Group	Living Costs	Countries	Group 1	higher living costs	DK, IE, FR, IT, AT, FI, SE, UK, LI, NO	Group 2	medium living costs	BE, CZ, DE, EL, ES, HR, CY, LU, NL, PO, SI, IS, TR	Group 3	lower living costs	BG, EE, LV, LT, HU, MT, PL, RO, SK, FYROM
Group	Living Costs	Countries											
Group 1	higher living costs	DK, IE, FR, IT, AT, FI, SE, UK, LI, NO											
Group 2	medium living costs	BE, CZ, DE, EL, ES, HR, CY, LU, NL, PO, SI, IS, TR											
Group 3	lower living costs	BG, EE, LV, LT, HU, MT, PL, RO, SK, FYROM											

Վերցված է erasmusplus.am վեբկայքից:

Ընդհանուր դրույթներ

Շարժունության ծրագրերին մասնակցելու համար ուսանողներն ու աշխատակազմի ներկայացուցիչները պետք է տիրապետեն համաեվրոպական լեզուների շրջանակի առնվազն B1 մակարդակին: Յուրաքանչյուր ծրագրի՝ լեզվին առնչվող պահանջը հստակ սահմանվում է հայտարարությունում:

Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում օտարերկրյա բուհում ձեռք բերած կրեդիտները ճանաչվում են ԳԿՄԿ-ում՝ ըստ նախապես համաձայնեցված ուսումնական պլանի: Ոստի մասնակցությունը կրեդիտային շարժունության ծրագրին ենթադրում է, որ ուսանողի կրթական ծրագրի ընդհանուր տևողությունը կհամապատասխանի իր կրթական ծրագրին: Օտարերկրյա բուհում սովորելիս ուսանողը գնահատվում է ընդունող բուհի գնահատման սանդղակով: ԳԿՄԿ-ի գնահատման սանդղակի համապատասխանելիությունը ECTS գնահատման սանդղակին բերվում է ստորև: Ըստ այդ սանդղակի էլ իրականացվում է գնահատականների փոխանցումը ԳԿՄԿ-ի կրթական ծրագիր: Առանձին դեպքերում հնարավոր է գործի գնահատականների փոխանցման այլ տարբերակ:

Գնահատականը	Ռեյթինգը՝ 100 միավորանոց համակարգով	Միավորը՝ 20 միավորանոց համակարգով	Միավորը՝ 10 միավորանոց համակարգով	Թվանիշը՝ կրեդիտային համակարգով	Տառային նշանակումը՝ կրեդիտային համակարգով
Գերազանց	95-100	20	10	4,0	A+
	87-94	19	9	4,0	A
	81-86	18	9	3,7	A-
Լավ	75-80	17	8	3,3	B+
	71-74	16	8	3,0	B
	67-70	15	7	3,0	B
	61-66	14	7	2,7	B-

Բավարար	58-60	13	6	2,3	C+
	55-57	12	6	2,3	C+
	51-54	11	5	2,0	C
	46-50	10	5	2,0	C
	43-45	9	4	1,7	C-
	40-42	8	4	1,7	C-
Անբավարար	<40	<8	<3	1,0	D
Չներկայացած				0	F
Ստուգված				-	S
Չստուգված				-	U



Ինչպե՞ս դիմել Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրին

Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի մասնակցության վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է Գիտակրթական միջազգային կենտրոնի պաշտոնական կայքէջում:

Հայտարարության հրապարակումից հետո դիմորդը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

- ✓ Ինքնակենսագրություն (ըստ եվրոպական Europass ինքնակենսագրության ձևաչափի)
- ✓ Ակադեմիական առաջադիմության տեղեկանք
- ✓ Ստոիվացիոն նամակ՝ անգլերեն լեզվով
- ✓ Երաշխավորագիր (ասպիրանտների դեպքում):

Դիմելուց հետո...

Դիմելուց հետո ԳԿՄԿ-ում կամ ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունում կազմավորվում է հանձնաժողով՝ ստացված հայտերը գնահատելու և մասնակիցների կարճ ցուցակ կազմելու համար: Կարճ ցուցակ կազմելիս հանձնաժողովը առաջնորդվում է հիմնականում հետևյալ չափանիշներով.

- Բարձր առաջադիմություն
- Մոտիվացիոն նամակ
- Օտար լեզվի բավարար իմացություն
- Երաշխավորագիր (Recommendation letter) (ասպիրանտների դեպքում)

Առանձին դեպքերում կարող են սահմանվել հավելյալ կամ այլ չափանիշներ:

Կարճ ցուցակում ընդգրկված ուսանողները հրավիրվում են հարցազրույցի: Հարցազրույցը հաղթահարած ուսանողների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ուղարկվում է ընդունող համալսարան: Դիմորդների ընդունելության վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ընդունող համալսարանը:

Հարցազրույցը հաղթահարած դիմորդների հետ

Մինչև շարժունության ծրագրին մասնակցելը դիմորդը պետք է լրացնի ուսումնառության և/կամ դրամաշնորհների համաձայնագրերը, որոնց ձևանմուշները կարող եք գտնել այս բաժնում:

Ուղարկող և ընդունող համալսարանները ուսումնառության համաձայնագիրը պետք է նախապես լրացնեն և համաձայնեցնեն միմյանց հետ: Որոշ եվրոպական համալսարաններ պահանջում են նաև առցանց դիմումի լրացում, որն անհրաժեշտ է մինչև մեկնելը իրականացնել սահմանված ժամկետներում: Վճարովի համակարգում սովորող ուսանողները պետք է վճարեն ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում տվյալ ժամանակահատվածի համար սահմանված իրենց ուսումնառության վարձը:

Որպես Էրազմուս+ ուսանողներ, դիմորդները ազատվում են ընդունող բուհում ուսման, գրանցման, քննությունների, լաբորատորիաներից կամ գրադարաններից օգտելու վճարներից: Փոքր վճարներ կարող են գանձվել ապահովագրության կամ ուսանողական միություններին անդամակցելու համար:

Ի՞նչ աջակցություն կարող եք ստանալ ԳԿՄԿ-ի և ընդունող համալսարանի արտաքին կապերի բաժիններից

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժինը՝

Կազմակերպում է հանդիպումներ՝ ծրագրի մանրամասներին
ծանոթացնելու համար:

Աջակցում է վիզայի փաստաթղթերը լրացնելիս:

Աջակցում է ուսումնառության համաձայնագիրը լրացնելու

ընթացքում:

Ըստ ծրագրի առանձնահատկության տրամադրում է այլ
տեղեկատվություն:

Ընդունող համալսարանի միջազգային համագործակցության բաժինը՝

Տրամադրում է համալսարանում ուսումնառելու հրավեր-նամակ:

Աջակցում է ընդունող երկրում կացության հարցերը կարգավորելու
գործընթացում:

Տրամադրում է տեղեկատվություն՝ համալսարանում ուսումնառելու
վերաբերյալ:

Համապատասխան միջոցառումներ է կազմակերպում ուսանողների
ինտեգրման համար:

Ի՞նչ է անհրաժեշտ անել կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում ուսումնառությունն ավարտելուց հետո

Վերադառնալուց հետո ուսանողները պետք է ներկայացնեն ուսման ավարտը և ձեռքբերումները հաստատող փաստաթուղթը (transcript of records) և ԳԿՄԿ-ում ներկայացնեն հաշվետվություն՝ օտարերկրյա բուհում իրենց ուսումնառության գործընթացի մասին: Աշխատակիցները պետք է ներկայացնեն հաշվետվություն՝ օտարերկրյա բուհում իրականացրած ծրագրի, հետագա համագործակցության, ձեռք բերված պայմանավորվածությունների, առաջիկայում նախատեսված անելիքների վերաբերյալ: